



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

21 հոկտեմբերի 2011թ. թիվ 484

**ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1996թ. մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման եւ հաշվետվության կարգը հաստատելու մասին» թիվ 147 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի «Ժբ» ենթակետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Մարզային ենթակայության կազմակերպություններում ս/թ նոյեմբերի 1-ից 30-ը անցկացնել 2011թ. տարեվերջյան գույքագրումներ:
2. Գույքագրման արդյունքների հավաստիության, ճիշտ եւ ժամանակին կատարման պատասխանատվությունը դնել կազմակերպությունների ղեկավարների վրա:
3. Գույքագրումների կատարման վերահսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան վարչությունների վրա:
4. Գույքագրման արդյունքները ներկայացնել մարզպետարան մինչեւ ս/թ ղեկտեմբերի 10-ը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. հոկտեմբերի 21  
ք.Վանաձոր